ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФАКУЛЬТЕТ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF INTERNATIONAL RELATIONS

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

• ՀՀ, քաղաք Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60)71-00-79, 71-00-78, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 247 «__13____»___09_____2024 թ.

Արձանագրություն N 247

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2024թ-ի սեպտեմբերի 13-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 36 (երեսունվեց) անդամներից 26-ը:

1. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը / զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
2. Ռոտացիայի ցուցակների հաստատման հարցը / զեկ.՝ դեկանի տեղակալ-գրասենյակի ղեկավար Գոռ Պետրոսյան/:
3. Անվանական կրթաթոշակների տրամադրման հարցը / զեկ.՝ դեկանի տեղակալ-գրասենյակի ղեկավար Գոռ Պետրոսյան/:
4. Դասագրքի հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
5. Մենագրության հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
6. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության և Քաղաքագիտության ամբիոնների հեռակա ուսուցմամբ ասպիրանտներին և հայցորդներին ատեստավորել: Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի հայցորդ **Կառլոս Ղարիբի Հովսեփյանը** և Քաղաքագիտության ամբիոնի հայցորդ **Քնարիկ Գագիկի Աբրահամյանը** չեն ատեստավորվել ամբիոնի նիստին չներկայանալու և հաշվետվություն չներկայացնելու պատճառով:
2. Ռոտացիայի ցուցակները հաստատել:
3. ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Միջազգային հարաբերություններ» կրթական ծրագրի բակալավրի 4-րդ կուրսի ուսանող **Նաիրի Նվերի Պողոսյանին** ներկայացնել Ջոն Կիրակոսյանի անվան կրթաթոշակի, իսկ «Քաղաքագիտություն» կրթական ծրագրի բակալավրի 3-րդ կուրսի ուսանող **Հերիքնազ Շահենի Գևորգյանին՝** Ռուբեն Միրոյանի անվան կրթաթոշակի:
4. Դիվանագիտության ծառայության և մասնագիտական հաղորդակցության ամբիոնի դոցենտ **Ա. Աբրահամյանի** և դասախոս **Ռ. Մելիքյանի** համահեղինակությամբ **«Դիվանագիտական հաղորդակցում»** դասագիրքը երաշխավորել հրատարակության:
5. Միջազգային հարաբերություններ ֆակուլտետի ք.գ.թ., դոցենտ **Արուսյակ Ալեքսանյանի** խմբագրությամբ **«Դիմակայող քաղաքական համակարգերը հիբրիդային պատերազմների և խաղաղության խաչմերուկներում»** վերտառությամբ կոլեկտիվ մենագրությունը երաշխավորել հրատարակության:

Գիտական խորհրդի նախագահ *Տ. Եփրեմյան*

Գիտական խորհրդի քարտուղար *Գ. Բալասանյան*